ԵՒԿՈՒ ՍՈՒՐՈՒՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա.

Վ.ԱՌԱՐԱՆԻ ՄԸ ԿԱՑԹԵՐ

Բ.

ՊԱՆԴՈՒԽՏ Վ.ԱՆՑԻՆ

Սոցն հրատարակութիւններն, որոց վերայ Ազգային Պարբերականներն խօսած են արդէն, նոր հասան մեր ձեռքն։ Շատ ուրախ ենք, որ երկու հարազատներ. Ս. և Արիստակէս վարդապետ Տէր Սարգսենց, Հայկական Գրականութեան սեղանի վերայ կը բերեն իրենց մոտայ երախայրիքն, որոնք Հայոց ջրով ոռոգուած և Հայոց արեւով հասած են։ Վ.ԱՌԱՐԱՆԻ ԿԱՑԹԵՐԷՆ ազատութեան բոց կը ցոլայ, որ գերի Հայուն միակ փափաքելի կենդանութիւնն է. ՊԱՆԴՈՒԽՏ Վ.ԱՆՑԻՆ սրտէն Հայրենեաց սէր կը կաթի, որ Հայրենի աւեր Տան վերաշինութեան միակ շաղախն է։ Կայծերէն մոքեր կը վառին. Սէրէն՝ սրտեր կը կապին։ Մոքեր վառել աղատութեան հրով, սրտեր կապել Հայրենասիրութեան կապով. ի՞նչ քան զայս սիրուն նիւթ գրութեան և հրատարակութեան։

Թող գրեն ուրեմն մեր աղնիւ երկասէրքն, Տէր Սարգսենց սիրելի հաբաղատքն, և քաջայոյս եմք, որ միշտ հաճութեամբ պիտի կարդացուին իրենց հրատարակութիւնքն, մանաւանդ որ Պանդուխտ Վանցին Արժ. Հեղինակն Վասպուրականի գաւառական բառերու բառարանն եւս կ'աւանդէ իւր երկասիրութեան հետ, որ մեծ գովութեան արժանի է։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Երուսաղէմի Ռուսաց Հիւպատոսն, Պ. Կաժենիկով, Ռուսաստանի ընդհանուր Հիւպատոս նշանակուած է. բայց Թերեւս Զատիկն զկնի ուղեւորի իւր նոր պաշտօնատեղին։

—Ներկայ ամսոյս մէջ բաւական անձրեւներ տեղացին, որոց կարօտ էր Պաղեստին։ Արտեր, դաշտեր և լեռներ կանաչացած են և Գարնան սիրուն տեսքով կը պատկերանան։ Եթէ յաջորդ ամիսներուն մէջ եւս անձրեւներն այսպէս շարունակին, Պաղեստինի հունձն անցած տարիէն աւելի առատ պիտի լինի. վասն զի խիստ շատ վարուցանք եղած է եւ անընդհատ կը լինի։

—Բաւական ժամանակէն 'ի վեր Երուսաղէմէն 'ի Յոպպէ եղած ճանապարհն կը նորոգուի, որպէս զի ոչ միայն գրաստուց, այլ և կառաց երթեւեկութիւնն անխափան կատարուի 'ի դիւրութիւն և 'ի հանգստութիւն ճանապարհորդաց։

—Խմբագրութիւնս շնորհակալութիւն կը մատուցանէ Մեղու Հայաստանի լրագրի և Հայկական Աշխարհ օրագրի Մեծայարգ Խմբագրաց՝ իրենց թերթերն ղրկելու համար։

digitised by A.R.A.R.@